

տուաւ Պ. Ս՛օլ գաղղիացի արևելագէտը, ՚ի պարսիկ բնագրէն թարգմանելով զՇահ-Նաֆ գաղղիարէն արձակ լեզուաւ, զոր և 1838^ն սկսաւ փառաւորապէս ու ճոխութեամբ տպագրել բնագրաւն հանդերձ, ընծայելով զայն առ Սուրբ-Ստեփանոս Փիլիպպոս : Ըստպէս թագաւորի մը անուամբը գրուեցաւ Շահ-Նամէն, ու թագաւորի անուամբ մ'ալ ծանօթացաւ այն Եւրոպիոյ՝ որ ճանչցաւ թէ Ս'սիա ալ ունի, և կրնայ ալ եղեր ունենալ իրեն դեռ նոր հումերոսները :

ՏՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Իր կամ Արայ Հայկազն¹ :

Սրդ անոնք (հոգիները) հասածնուն պէս՝ մէկէն Սաբեսիսին երթալու են . մարգարէ մընախ զանոնք կարգաւ կը կեցընէ, ետքը Սաբեսիսին ծնկուրներէն կ'առնու վիճակները և կենաց օրինակները, կ'ելլէ բարձր բեմ մը՝ կ'ըսէ . « Հարկին աղջկան Լաթեսիս օրիորդին խօսք . Վիչ ատենուան հոգիք, մահկանացու ազգին երկրորդ մահաբեր շրջանին ըսկիզբն է . դեւր ձեզի պիտի չվիճակի, հապա դուք պիտի ընտրէք դեւր . ով որ առաջ վիճակի, առաջ ընտրէ կեանքը որով պիտի մնայ ՚ի հարկէ . իսկ առաքինութիւնը՝ տիրող չունի, զոր եթէ պատուէ մէկը կամ արհամարհէ, ըստ այնմ աւելի կամ պակաս պիտի ունենայ իրմէն . մեղքը ընտրողին է, Ստուած անմեղ », Սը ըսելով, կը նետէ վիճակները ամենուն վրայ, և ինչ որ ամէն մէկուն կ'իյնայ նէ՛ ան կ'առնու . բայց թէ ուր, անիկայ չթողուր . ով որ մէյմը առնու նէ, անոր յայտնի կ'ըլլայ քանիւրորդ առաւ : Սկէ ետքը կենաց օրինակները առջևնին կը դնեն գետնին վրայ, հիմկու եղածներէն խիստ շատ, և տեսակ տեսակ են, թէ՛ ամէն կենդանեացը և թէ՛ մարդկանց կեանքը առ

¹ Տես էրես 341 :

հասարակ : Ս ան զի մէջերնին բռնաւորութիւններ՝ կայ, որը շարունակ, որն ալ ճամբուն մէջ աւրուած և յաղքատութիւն, յաքսոր և ՚ի մուրացկանութիւն վերջացած : Սան նաև ընտիր մարդկանց կեանք, որը տեսքով և ազուորութեամբ, և ուրիշ ուժով և քաջութեամբ, որն ալ ծնողաց և նախնեաց առաքինութեամբ, ասանկով բարեհամբաւ եղած : Սոյնպէս ալ կանանց : Ս ՚ի հոգիին դաս մը չկայ, որ հարկ ըլլայ ուրիշ կեանք մը ընտրողին ուրիշ կերպ ըլլալու . իսկ ուրիշ բաները՝ իրարու և մեծութեան աղքատութեան հետ, որն ալ հիւանդութեանց և առողջութեան հետ խառնած են . կայ ալ որ ասոնց մէջ տեղն են : Հոս է ահա, որպէս թուի, ով սիրելի Վաւկոն, մարդուս բոլոր վտանգը . ուստի և խիստ հոգալու է որ ամէն մէկերնիս ուրիշ ուսմունքներուն անփոյթ ըլլալով, աս ուսմանը խնդրող և աշակերտ ըլլայ՝ որով կարենայ սորվիլ ու գտնել՝ ով զինքը կարօղ և գիտուն պիտի ընէ, որ աղէկ ու գէշ կեանքը ճանչնալով՝ կարելիներէն միշտ ամէն տեղ լաւագոյնը ընտրէ, քննելով թէ բոլոր հիմայ ըսուածները, իրարու հետ մէկ տեղ և զատ զատ առնելով՝ կեանքը ինչպէս առաքինի կ'ընէ . և գիտնալ թէ ազուորութիւնը աղքատութեամբ կամ մեծութեամբ հանդերձ և հազուոյ ունակութեամբ մը՝ ինչ չար կամ բարի կրնայ գործել . և ազնուականութիւն և անտոհմութիւն, ռամկութիւն և իշխանութիւն, ոյժ և տկարութիւն, սրամտութիւն և բթամտութիւն, և ամէն հոգւոյն վրայ բնական եղած այսպիսի բաները և ստացականները՝ մէկտեղ իրարու հետ որ խառնուին՝ ինչ կրնան գործել . որպէս զի աս ամենէն կարենայ խորհիլ և ընտրել, հոգւոյն բնութեանը նայելով, յուրեգոյն և լաւագոյն կեանքը . յուրեգոյն ըսելով ան՝ որ զհոգին անիրաւագոյն ըլլալու կը տանի . իսկ ուրիշ ամէն բանի երթաս բարով ըսէ . զի տեսանք որ ՚ի կեանս և ՚ի մահու աս է լաւագոյն ընտրութիւնը : Ս կարծիքը ա-

մուր բռնելով պիտի երթայ դժոխքը , որպէս զի հոն ալ անաստան ըլլայ 'ի մեծութենէ և այնպիսի չարիքներէ . և ըլլայ թէ բռնաւորութեան մէջ իյնալով կամ ուրիշ այնպիսի գործոց , շատ և աններելի չարիք գործէ , և ինքն ալ աւելի մեծը կրէ . հապա գիտնայ ասոնց միջին կեանքը ընտրել միշտ , ու երկու կողմի չափազանցներէն փախչիլ ըստ կարի , թէ աս կեանքիս մէջ և թէ բոլոր հանդերձելոյն . վասն զի այսպէս ամենէն երջանիկ կ'ըլլայ մարդը :

Ըրգ ան ատեն անդիէն եկող պատգամաւորը պատմեց որ մարգարէն ասանկ ըսաւ . “ Ետքէն եկողին , խելքով ընտրողին , փութաջան ապրողին սիրուն կեանք կայ , չէ թէ գէշ . ոչ առաջ սկսողը անհոգ ըլլայ , ոչ ալ ետքինը լքանի ” : Եւ աս որ ըսաւ , առջի վիճակ առնողը , կ'ըսէր , մէկէն գնաց ամենէն մեծ բռնաւորութիւնը ընտրեց , և անմտութեամբ ու անյագութեամբ ամէն բան բաւական չքննելով ընտրեց . չտեսաւ եղած ճակատագիրը , որ իր զակրներն ալ պիտի ուտէ , և ուրիշ չարիքը : Ետքը երբոր պարապով քննեց , լացաւ ու ողբաց իր ընտրութիւնը , որ մարգարէին ըսածները չպահեց . և չարեացը համար չէ թէ ինք իրեն կը մեղադրէր , հապա բախտին ու դեբրուն , և իրմէ դուրս ամենուն : Եւ էր ասիկայ երկնքէն եկողներէն , առջի կենացը մէջ կարգաւորեալ քաղաքավարութեամբ ապրեր էր , առանց փիլիսոփայութեան սովորութեամբ միայն առաքինութեան հետեւելով : Եւ այսպէս կ'ըսէր , թէ երկնքէն եկողներուն շատը ասանկ մտորեալ են , փորձանքի անհմուտ ըլլալով . իսկ երկրէ եկողներուն շատը , իրենք ալ փորձանք կրած ուրիշներն ալ տեսած ըլլալով , հարեանցի չեն ըներ ընտրութիւննին : Ըսոր համար չարեաց և բարեաց փոփոխութիւն շատ հոգիներու կ'ըլլայ , նաև վիճակին բախտին համար : Իսկ թէ որ մէկը աս կեանքս եկած ատենը՝ միշտ ողջամիտ փիլիսոփայ ըլլայ , ընտրութե վիճակն ալ իրեն էն ետքը իյնալու չվը

տանգի , անդիու զրոյցներուն նայելով՝ ոչ միայն հոս երջանիկ կ'ըլլայ , այլ նաև անկից հոս՝ ասկից հոն ճամբան՝ չէ թէ գետնի տակ ու խորտաբորտ կ'երթայ , հապա դիւրին և երկնային :

Ըս ալ , կ'ըսէր , արժանի տեսնելու տեսարան մըն է , թէ ինչպէս իւրաքանչիւր հոգի կ'ընտրէր կեանքը . վասն զի խղճալի և ծաղրական և զարմանալի բան էր տեսնելը , թէ ինչպէս շատը առջի կենաց սովորութեամբ կ'ընտրէին : Եւ կ'ըսէր թէ ատենօք Արփեսին եղած հոգին տեսեր էր՝ որ կարապի կեանքը ընտրեր էր , կանանց ատելութիւն ունենալուն և անոնցմէ ըսպաննուած ըլլալովը՝ կնոջ արգանդը ծնածը ըլլալ չուզելուն . (մամիրիսինն ալ տեսեր էր որ սոխակինն ընտրեր էր : Տեսեր էր ալ , որ կարապը դարձեր մարդկային կեանք էր ընտրեր . նոյնպէս ուրիշ երգող անասուններն ալ , որպէս 'ի դէպ էր : Ա իճակն ընտրող հոգիին մէկն ալ՝ առիւծին կեանքն ընտրեր էր , և աս էր Տելամոնեան Լասինը , որ յոնձն չէր առնուր մարդ ըլլալ յիշելով (Լ. քիւլէսի) զինուց համար (իրեն դէմ եղած) դատաստանը : Ընկէ ետքն ալ Ըգամեմոնինը , որ ան ալ մարդկային կեանքը ատելով կրած բաներուն համար , կեանքը արծիւի փոխեր էր : Իսկ Ըտալանդէի հոգին որ միջակ վիճակի հանդիպեր էր , տեսնելով ըմբիշի մեծամեծ պատիւները , չէր կրցած զանց ընել , և զայն առեր էր : Ընոր ետեւէն Պանուպեան Եպիսոսի հոգին էր տեսեր , որ ճարտարարուեստ կնոջ բնութիւնն էր անցեր : Ետքը ետքը՝ ծաղրածու Սերսիտեսին հոգին տեսեր էր , որ զկապիկին հագեր էր : Եպիսուածով Ադիսեւսի հոգին ամենէն ետքի վիճակին հասեր էր որ երթայ ընտրէ . բայց առջի քաջած նեղութիւններն յիշելով , փառասիրութենէ դադրած , շատ ատեն պտրտեր փնտռեր է ռամիկ և անզբաղ մարդու մը կեանքը , և հազիւ հազ գտեր է՝ որ տեղ մը ինկած մնացած էր ուրիշներուն անհոգութենէն . և տեսեր է նէ , ըսեր է որ առաջ ալ հասներ վի

Ճակս , նոյնպէս պիտի ընէի , և յօժա-
րութեամբ ընտրէի ասիկայ :

Նոյնպէս ալ , (կ'ըսէր) , ուրիշ անա-
տուններէն մարդիկներուն կ'անցնին և
ասոնցմէ անոնց . անիրաւները՝ վայրե-
նիներու , իսկ արդարները՝ ընտանինե-
րու փոխուելով , և ամէն կերպ խառ-
նուրդ կ'ըլլայ :

Արդ , երբոր բոլոր հոգիները կեան-
քերնին կ'ընտրեն՝ ինչ որ վիճակի , կար-
գաւ Ապրետիսին կ'երթան . ան ալ ամէն
մէկուն՝ ինչ դե որ ընտրեր է նէ ,
զանի իրեն կենաց պահապան հետը կը
խաւրէ և ընտրած բաներուն կատարող :
Այց առաջ Արթովին կը տանի՝ որ ա-
նոր ձեռքին ու իլին շրջանին պտուտքին
տակը հաստատէ վիճակաւ ընտրած ճա-
կատագիրը : Աոր ալ հանդիպելէն ետ-
քը , դարձեալ Մորոպոսին մանուածքին
կը տանի՝ որ մանածները անդառնալի
ընէ : Անկից նոյնհետայն հարկին ա-
թուին տակը կ'երթան . անկից ալ անց-
նելէն ետքը , երբոր մէկալսնք ալ կ'անց-
նին , ամէնքը մէկտեղ սաստիկ շողիով
մը և մորիկով կ'երթան Աթէի դաշ-
տը , որ ամենեւին ծառէ ու երկրի բոյ-
սերէ դատարկ է . ուստի իրիկուն որ
ըլլայ Ամելիտ գետին քով կը բնակին ,
որուն ջուրը ամենեւին աման մը չտանիր .
ուստի իւրաքանչիւր չափ մը միայն ջրէն
խմելու է . իսկ ոյք որ խոհեմութեամբ
չեն ամրանար , չափէն աւելի կը խմեն ,
և միշտ խմողը՝ ամէն բան կը մոռնայ :
Աւ երբոր քնանան ու կէս գիշեր ըլլայ ,
որտուժ և շարժ կ'ըլլայ , և անկից յան-
կարծակի ամէն մէկը ասդիս անդին կը
վերանան , ՚ի ծագումն ցատքելով , աս-
տեղաց պէս : Անքն ալ (Արոսը) արգե-
լուեր էր ջրէն խմելու , իսկ ուսկից և
ինչպէս ՚ի մարմինն գալը , բնաւ չէր գի-
տեր . բայց յանկարծ առտուն աչքը բա-
ցեր տեսեր էր զինքը խարուկին վրայ :

Աւ ահա այսպէս , սլ Ալուկոն , աս
զրոյցս պահուեցաւ ու չկորաւ . զմեզ
ալ փրկէ՝ թէ որ անսանք իրեն . և Աթ-
էի գետը աղուոր մը կ'անցնինք , և հո-
գինիս չենք պղծեր :

Ասան որոյ , թէ որ ինծի մտիկ ը-

նենք՝ հոգին անմահ համարելով և ա-
մէն չարիք և ամէն բարիք ընդունելու
կարող , միշտ վերի ճամբան կը բռնենք ,
և ամէն կերպով արդարութեան ետեւ
կ'ըլլանք խոհեմութեամբ հանդերձ , որ
մենք մեզի ալ սիրելի ըլլանք և աստուա-
ծոց ալ , թէ հոս որ միանք և թէ երբ-
որ անոր մրցանակը առնունք , ինչպէս
յաղթողաց ժողով մը , և հոս ալ՝ հա-
զարամեայ ճամբուն մէջ ալ որուն վրայ
խօսեցանք , երջանիկ կ'ըլլանք ,” :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուրովիկոս ԺԶԻն վարքն ու մանր¹ :

Աեպտեմբերի 3^{ին} առտուն երբոր
թագաւորը կը հագուեցընէի , հարցուց
թէ արդեօք լուր մը առի հիւ սենեկա-
պետին վրայօք , և թէ Ռարիզու խոռ-
վութիւնը երթալով ինչ կ'ըլլար : Պա-
տասխան տուի թէ Աս գիշեր քաղաքա-
կան պաշտօնեայ մը իմացուց ինծի , որ
բանտերը բազմութեամբ ժողովրդեան
կը լեցուին . և խոստացայ ուրիշ անգամ,
փոյթ ընելու որ կարևորագոյն լըերը ի-
մանալու անհոգ չըլլամ : “ Օգոյշ կեցիր,
ըսաւ թագաւորը , չըլլայ թէ վտանգի
մը մէջ ձգելով ինքզինքդ , զմեզ միսակ
թողուս . վասն զի կը վախեմ որ խռով-
արարաց միտքն է զմեզ օտար մարդիկ-
ներու ձեռքը յանձնել ,” :

Առտուն ժամը 11^{ին} երբոր թագա-
ւորը և իր ընտանիքը թագուհոյն խու-
ցը ժողվուած էին , քաղաքական պաշ-
տօնեայ մը մօտեցաւ քովս , և ըսաւ որ
թագաւորին խուցը երթամ , ուր որ կե-
ցեր էր Սանուէլ քանի մը հասարակաց
ատեանին անդամներովը : Հարցուց ին-
ծի Սանուէլ թէ “ Արդեօք ինչ ըսաւ
ինծի թագաւորը հիւին կալանաւորու-
թեանը վրայօք : — Արտը քիչ մը ան-
հանգիստ է , ըսի , այս բանիս վրայ : —
Անացը վտանգ մը չկայ , ըսաւ Սա-
նուէլ . բայց պէտք է որ մէյմը թագա-

¹ Տես . հտ . ԺԳ , երես 329 . հտ . ԺԴ , եր .
170 , 240 , 320 :